

ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության և բժշկագիտության բնագավառում համագործակցության համաձայնագիր է ստորագրվել 2014թ. հունվարի 31-ին ՀՀ առողջապահության նախարարության և Չեխիայի Հանրապետության առողջապահության նախարարության միջև: Համաձայնող կողմերը կհամագործակցեն հետևյալ ոլորտներում`

- Առողջապահության համակարգի բարեփոխում,
- Բժշկական սպասարկում,
- Հանրային առողջության պահպանում և զարգացում,
- Բժշկական հետազոտություն,
- Դեղագիտություն,
- Համաձայնող կողմերի փոխադարձ համաձայնությամբ համագործակցություն

այլ ոլորտներում,

- Ստանդարտ աշխատանքային շփումներ,
- Բարձրաստիճան պաշտոնյաների փոխայցելություններ,
- Նյութերի և փաստաթղթերի առաքում (հրապարակումներ և ուսումնասիրություններ),

• Փորձի, տեղեկությունների, վիճակագրության, առողջապահական օրենսդրական փաստաթղթերի և լավագույն հմտությունների փոխանակում,

- Պայմանավորվող կողմերի փոխադարձ համաձայնությամբ որոշված

փոխգործակցության այլ ձևեր: